

բուլղեղիկները Ռուսաստանի եւ Թուրքիոյ սուլթաններու շնորհիւ եկան եւ բազմեցան փոքրիկ Հայաստանի գլխուն եւ նոր դրօշակ բարձրացուցին՝ ստիպելով հայ ժողովուրդին, որ նորէն հակուի բուլղեղիկեան Ռուսաստանի կողմը:

Ռուսական նոր օրինաւորացիա, սակայն մինչեւ հիմա նմանը չտեսնուած ձեւով, դասակարգային եւ Խորհրդային, ընկերային յատկութեան հիմունքներով:

Անցեալի մէջ Հայ ժողովուրդը կամ ռուսական օրինաւորացիա չէ ունեցած, եւ կամ փոխադարձ խարերայութիւններու վրայ հիմնուած է եղեր: Այսպէս կը արամարանէին հայ բուլղեղիկները, երբ տէր դարձան Հայաստանին եւ կ'աւետէին, թէ հայ ժողովուրդը շուտով պիտի տեսնէ բուլղեղիկեան Ռուսաստանի օրինաւորացիայի փրկարար հետեւանքները:

Երբ հայ բուլղեղիկները հայոց քաղաքական-պղպային բեմի վրայ երեցան, հայ կեանքը մտաւ անբնականոն հունի մը մէջ: Հայ հայրենիքի փոքր մասը մնաց Հայաստանի անուան տակ. իսկ անդին՝ կովկասեան Հայաստանի շարք մը կարեւոր հողամասեր բաժին մնացին Թուրքիոյ, Ատրքէյջանին եւ Վերաստանին, իսկ Տաճկահայաստանն ամբողջովին մնաց անմարդարնակ՝ Թուրքի սուլթանին ինթակայ: Հայ ժողովրդի երկու երրորդը դուրս մնաց ներկայ Հայաստանէն, անորոշ եւ դաշխական վիճակի մը մէջ:

Բուլղեղիկներն սմէն ինչ, որ անցեալին կը պատկանէր, այրեցին: Նոյնիսկ ճգնեցան ապացուցանելու, որ հայութիւնը անցեալի մէջ ռուսական օրինաւորացիա ունեցած չէ, եւ միայն հիմա, Խորհրդային կարգերու ժամանակն է, որ յանձին բանուորա-գիւղացիական կառավարութեան կարմիր Ռուսաստանի օրինաւորացիան կ'ընդգրկէ, որպէս միակ փրկարար ճամբայ մը*):

*) Ռուսական Օրինաւորացիայի Խորհրդը զբքով մը Աշոտ Յովհաննէսեան քննութեան առած է 1921 թուին, հրատարակութեան տարով Իսրայէլ Օրիի շրջանի գլխաւոր տնօրէնի թղթերու բնագրերը: Գիրքը, ղժրախտարար, այժմ ձեռքիս տակ չէ, որպէսզի հեղինակի

Այսպիսով, հայ կեանքը շերտաւորուեցաւ եւ դասաւորուեցաւ երկու ճակատի շուրջ. — ա) Դաշնակցական ճակատը, որու խոչնդակ է Միացեալ եւ Անկախ Հայաստանի կազմութիւնը, եւ ուղղուած է Թուրքիոյ դէմ եւ հակա-բուլղեղիկ է, եւ բ) բուլղեղիկեան ճակատը, որ անկախութեան, սահմաններու ընդարձակման եւ հայահաւաքման հակառակ է, եւ բարեկամ է Թուրքիոյ:

Այս երկրորդ ճակատին քովնորի կ'ընթանան Ռամկաւարները, անկազմակերպ Հրնչակեաններէն ոմանք, ազաներ եւ հարուստներ (դոնէ խօսքով) եւ երբեքու չէ «էգո»ներու մէկ մասը: Հետեւորդներու այս կարաւանն անշուշտ անկեղծ չէ իր ընթացքին մէջ եւ տարուած է գլխաւորաբար Դաշնակցութեան դէմ իր ունեցած ստեղծութիւնէն, եւ մասամբ մըն ալ քաղաքական խոչնդակ շունենային:

Սակայն, փաստ է այսօր որ հայ բուլղե-

խակական խօսքերով պատկերացնէի բուլղեղիկներու ըմբռնած ռուսական օրինաւորացիան:

Այդ գիրքը թէեւ նուիրուած է Իսրայէլ Օրիի շրջանին, սակայն, հեղինակը մտահոգուած է Հ. Յ. Դաշնակցութեան քաղաքականութեամբ: Փաստելով, որ Իսրայէլ Օրիի ժամանակի դիմումագրերէն ոմանք կեղծ են, եւ հայ զանգուածը նախընտրած է Պարսկաստանի հետ ըլլալ, կը ժխտէ այդ ժամանակուան ռուսական օրինաւորացիայի գոյութիւնը:

Հեղինակը վախով մը կ'անդրադառնայ, թէ այդ իր եղրակացութիւնը Դաշնակցութեան տեսակէտը կը զօրացնէ, բայց բուլղեղիկեան ճկունութեամբ մը մարքսիստական պատրաստի պատասխանը կը գտնէ. — Հին Ռուսաստանը կեղեքող դասակարգի Ռուսաստանն էր, եւ հայերը կ'ընային գզուիլ այդպիսի Ռուսաստանի մը օրինաւորացիայէն, իսկ հիմա բանուորա-գիւղացիական ընկերվարական Ռուսաստան գոյութիւն ունի, եւ, ըստ Աշոտ Յովհաննէսեանի, բանուորա-գիւղացիական Հայաստանը բուլղեղիկեան Հայաստանի օրինաւորացիան պէտք է ընդգրկէ:

Պէտք է, այո՛, երեւի այն սպասելիքներով, որ Վ. Տէրեանի գիմումագրէն կը հասկըցուի: